

# **ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

## **ՍԻՄՈՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՄԻ**

**Օպերատիվ-հետախուզական գործունեություն և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հիմնախնդիրները հանցագործությունների կանխարգելման և քննության համատեքստում**

ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, Վարչական դատավարություն, քրեական դատավարություն, Կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածովի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## **ՍԵՂՄԱԳԻՐ**

## **ԵՐԵՎԱՆ - 2023**

**РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ**

**СИМОНЯН АНДРАНИК АРАМОВИЧ**

**Проблемы взаимодействия органов, осуществляющих оперативно-розыскную деятельность и уголовное производство в контексте предупреждения и расследования преступлений**

## **ԱՎՏՈՐԵՖԵՐԱՏ**

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 – Судебное право (судопроизводство, гражданский процесс, административный процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

## **ԵՐԵՎԱՆ - 2023**

## **Աստենախոսության թեման հաստատվել է Հայ – Ռուսական համալսարանում**

**Գիտական դեկավար՝**

իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Վահե Գուրգենի Ենգիբարյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Անի Համլետի Դավթյան  
իրավաբանական գիտությունների թեկնածու,  
Վարազդատ Հովհեկի Սուքիասյան

**Առաջատար կազմակերպություն՝ «Հ Արդարադատության ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի օգոստոսի 12-ին, ժամը 11:00-ին Հայ–Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովհեկի Էմինի 123):

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ – Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցարահում:

Մեղմագիրն առաքվել է 2023 թվականի հունիսի 1-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,**

**իրավաբանական գիտությունների թեկնածու**  **Զ.Հ.Հայրապետյան**

---

**Тема диссертации утверждена в Российской-Армянском университете**

**Научный руководитель:**

доктор юридических наук, профессор  
**Վահե Գուրգենович Еնգիբարյան**

**Официальные оппоненты:**

доктор юридических наук, профессор  
**Անի Գամլетовна Давтяն**  
кандидат юридических наук  
**Վարզdat Օվикович Сукиасян**

**Ведущая организация:**

**Академия Правосудия РА**

Зашита диссертации состоится 12-ого августа 2023 года в 11:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г.Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников Российско-Армянского университета.

Автореферат разослан 1-ого июля 2023 года.

**Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук**



**Ջ.Ա.Այրապետյան**

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Իրավական պետության Սահմանադրությամբ սահմանված իրավական հատկանիշները կյանքի կոչելու հարցում հիմնարար նշանակություն ունի կոնկրետ պետությունում իրավակարգի, ներառյալ՝ հանցավորության մակարդակի այնպիսի վիճակի առկայությունը, որի պարագայում ընդհանուր առմամբ վտանգված չեն անհատի իրավունքներն ու օրինական շահերն ու պետության հիմնական օրենքով սահմանված այլ բարիքները: Հիշալ նպատակը կյանքի կոչելու հարցում ելակետային դերակատարում ունեն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող և քննչական մարմինների փոխգործողության հիմնախնդիրները, որոնք այս համատեքստում ձեռք են բերում առանձնահատուկ կարևորություն: Հանցավորության դրսնորումների վրա ներազեցության տարբեր մեթոդներ ենթադրող նշված մարմինների համագործակցության մեջ է հիմնականում դրսնորովում հանցավորության դեմ պայքարի պետության կողմից որդեգրած հայեցակարգային չափանիշներն ու քաղաքականությունը: Հետևապես, ակներև է, որ քննարկվող ինստիտուտի դերն անկյունաբարային է «պետության» կոչվող իրավաքաղաքական ինստիտուտին ներկայացված գիտական չափանիշների պահպանման տեսակետից:

Բնական է, որ վերը նկարագրված իրավիճակը պարարտ նախադրյաներ է ստեղծում գիտահետազոտական տիրություն անդրադարձ կատարելու քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողության հիմնախնդիրներն, արձանագրելու առկա իրավական խնդիրները, զատորոշելու դրանցից առավել իրատապները և դրանց կապակցությամբ միջազգային լավագույն փորձի հիման վրա ուրվագծել տեսություն-պրակտիկա ներդաշնակ կապի բանաձևումն առերևույթ հաղթահարող համարժեք առաջարկներ: Խնդրո առարկա իրավիճակի համատեքստում այդ առաջարկների ձևակերպումն առավելապես կարևորվում է հաշվի առնելով մի շարք մտահոգություններ, որոնց առավել մանրամասն և համապարփակ անդրադարձ է կատարվել աշխատության տարբեր գլուխներում:

Մասնավորապես, մինչև այժմ դեռ խնդրահարուց է թվում այն

իրավիճակի առկայությունը, որ մշակված չէ հանցագործությունների կանխարգելման հիմնահարցի մասով պատշաճ օրենսդրական հայեցակարգ: Ինստիտուտների օրենսդրական ամրագրման տեսակետից դեռևս պարզ չէ՝ հանցանքների կանխարգելման կիրառման ժամանակագրական պահը, եթե հանցանքի օբյեկտիվ կողմի գործողությունը չի հասցվում ավարտին օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների աշխատանքի շնորհիվ: Այս համատեսքում հարց է բարձրանում. պետք է արդյոք հանցանքը համարել կանխված այս իրավիճակում, թե՞ այն եզրագծվում է առավել վաղ ժամանակագրական պահով: Ընդ որում, ասվածն ունի ոչ միայն տեսական, այլ նաև ընդգծված գործնական նշանակություն քրեական օրենսգրքով (հանցագործությունից կամովին իրաժարում, չափարտված հանցագործություն, պատժի անհատականացման ինստիտուտ և այլն) և քրեական դատավարության օրենսգրքով (քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցություն, նախաքննության պատշաճ կազմակերպում և այլն) սահմանված ամենատարբեր ինստիտուտների կիրառման իմաստով:

Բացի այդ, միջազգային լավագույն փորձի հիման վրա առաջարկվել է հստակորեն համակարգել հանցանքների կանխման ընդհանուր և հատուկ միջոցները, որպիսին դարձյալ ունի ընդգծված գործնական նշանակություն: Վերջին հաշվով, հենց հանցանքների կանխման ընդհանուր և հատուկ միջոցներն են, որ իրենց համակցությամբ գործնականում ազդում են երկրում հանցավորության մակարդակի նվազման վրա: Հետևապես, այս հանգամանքը ևս աշխատանքի արդիականությունը ներկայացնելու համատեքստում ունի անկյունաթարային նաշանակություն:

Բնական է, որ հանցավորության կանխարգելման հիմնահարցի առնչությամբ հետազոտություններ իրականացնելիս հնարավոր չէ չանդրադառնալ նաև այս համատեքստում օպերատիվ-հետախուզական գործունեության նշանակությանը, ինչն ամենացայտուն ծևով ընդգծվում է այն իրողությամբ, որ օպերատիվ-հետախուզական առաքելություն իրականացնող մարմիններին առնչվող բոլոր օրենքներում էլ որպես խնդիր-նպատակ ամրագրված է հանցագործությունների կանխարգելումը, բացահայտումն ու խսիանումը: Բնական է, որ հաշվի առնելով << 2021 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքով սահմանված

իրավակարգավորումները՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների առաքելությունը պետք է քննարկման առարկա դառնա դրակապես նոր իրականության դիտանկյունից, երբ հետաքննությունը համարվում է նախաքննության իրականացմանն օժանդակող գործունեություն:

Վերը քննարկված համագործակցության բնույթն ու բովանդակությունը որակապես փոխվում են նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ ներկայում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում գաղտնի քննչական գործողություններ կարող են կատարվել բացառապես քննիչի հանձնարարության հիման վրա, ինչն ուղղակիորեն ենթադրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների և քննչական մարմինների փոխգործության հետ կապված հարաբերությունները դարձնել քննարկման առարկա նաև նշվածի լույսի ներքո:

Առանցքային նշանակություն ունի այս իմաստով նաև օպերատիվ-հետախուզական գործունեության և քննչական աշխատանքի պատշաճ կազմակերպումը նաև մեթոդիկայի տեսանկյունից: Այս իմաստով ևս գործող օրենսդրական կառուցակարգերն արմատական կատարելագործման անհրաժեշտություն են ենթադրում: Ակնհայտ է, որ քննչական և օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների պատշաճ փոխգործակցությունն անհնար է ապահովել առանց դրան առնչվող անհրաժեշտ կազմակերպական-մեթոդական հենքի: Այս համատեքստում հաշվի առնելով հետազոտության առարկան կազմով խնդիրների համակցությունը՝ վերաբերելի հատվածներով անդրադարձ է կատարվել նաև այդ հարցին՝ կատարված աշխատանքի առավել համապարփակ և համընդգրկուն բնույթն ապահովելու միտումներից ելնելով:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը հանցագործությունների կանխարգակեման և քննության համատեքստում օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների համագործակցության ինստիտուցիոննալ կառուցակարգերի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, դրա վերահիմնաստավորումը, շրջանառության մեջ տեսական նոր դրույթների, տերմինների և չափորոշիչների ներդնումը, ինչպես նաև կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկութ-

յունների մշակումը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար խնդիրներ են դրվել:

- Հստակեցնել «հանցագործության կանխարգելում» եզրույթի կիրառման առարկայական և ժամանակագրական շրջանակները.

- Վեր հանել քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության իրավական, կազմակերպական հիմքերը և այդ առնչությամբ անել այն առավել արդյունավետ դարձնելուն միտված համապատասխան առաջարկներ.

- Վերլուծել հանցագործությունների կանխման ընդհանուր և հատուկ միջոցները և միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ արդյունավետորեն տեղայնացնել դրանք.

- Հանցագործությնների կանխարգելման համատեքստում քննարկել օպերատիվ-հետախուզական գործունեության նշանակությունը և այս իմաստով առաջարկել քննչական մարմինների հետ առավել ներդաշնակ համագործակցությունն ապահովող կառուցակարգեր.

- Մշակել քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների փոխգործողության իրականացման անհրաժեշտ տեսական և մեթոդական հիմքեր, որոնց առավել բյուրեղացված դրսերումները ներդնել օրենսդրական կարգավորումներում.

- Մշակել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես ապացույց օգտագործելու օրենսդրական որոշակի չափորոշիչներ և դրանք ներդնել իրավակիրառ պրակտիկայում.

- Քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքի պատշաճ կազմակերպման առոմնով վերլուծել «քննության պլանավորում» հասկացությունը և դրա համատեսքում անել փոխգործողության արդյունավետությանն ուղղված համապատասխան առաջարկներ:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը հանցագործության կանխարգելման համատեքստում օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների փոխգործողության և փոխգործակցության հետ կապված հարաբերություններն են: Հետազոտության առարկան քրեական գործով մինչդատական վարույթի պատշաճ կազմակերպմանը, քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների

համագործակցությանը վերաբերող իրավական նորմերն են, միջազգային լավագույն փորձը, առկա իրավակիրառ պրակտիկան և դրան վերաբերելի դոկտորինալ աղբյուրները:

### **Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:**

Քննչական և օպերատիվ-հետախուզական մարմնների գործունեությանը առհասարակ վերաբերող առանձին ինստիտուտներ հետազոտության են Ենթարկել մի շարք հայ և արտասահմանյան հեղինակների գիտական աշխատություններում, դարձել են նաև գիտական ատենախոսությունների ուսումնասիրության առարկա: Այդ ուսումնասիրությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Ա. Ի. Ալեքսեևի, Ս.Պ. Բալանյանի, Ա. Ն. Բալաշովի, Ռ.Ս. Բելկինի, Ս. Ի. Գերասիմովի, Ի.Մ. Գուտկինի, Վ. Գ. Ենգիբարյանի, Վ. Ա. Լուկաշովի, Ի.Մ. Լուզգինի, Ա. Գ. Մարկովինի, Ա. Ս. Մելնիկովի, Ա. Ռ. Ռատինովի, Վ.Ի. Պոլոտինսկիի, Ա. Յա. Սովսարենի, Ս.Ս. Օվչինսկիի և այլոց աշխատությունները, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում իրատարակված դասագրքերը և գիտական այլ նյութերը, որոնք ել կազմում են սույն հետազոտության տեսական հիմքը:

Հատուկ ուշադրության են արժանի Անի Դանիելյանի՝ «Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ (2019թ.) և Վարագրատ Սութիայանի՝ «Օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ (2020թ.) թեկնածուական ատենախոսությունները:

Չնայած դրան՝ հարկ է նկատել, որ հայրենական դատավարագիտության մեջ դեռևս առկա չէ քննչական և օպերատիվ-հետախուզական մարմնների փոխգործակցության ինստիտուտին նվիրված համընդգրկուն աշխատություն:

**Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:** Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են քննչական և օպերատիվ-հետախուզական մարմնների փոխգործակցության ինստիտուտին առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը և դատական պրակտիկայի նյութերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Պայմանավորված հետա-

գոտության նպատակով և խնդիրներով, այն իրականացվել է խնչածս համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեղուկցիայի, անալիզի և սինթեզի, այնպես էլ հատուկ՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդների օգտագործմամբ:

**Հետազոտության գիտական նորույթը:** Աստենախոսությունը հայրենական իրավագիտության համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխագործակցության ինստիտուտին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են՝ հիմնվելով << քրեական դատավարության գործող օրենսգրքի, համապատասխան ոլորտներին վերաբերող իրավական ակտերի, առանձին օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունների և դատական պրակտիկայի համեմատաիրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած կարծիքների, << սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, << վճռաբեկ դատարանի դատական ակտերի և դատական պրակտիկայի, վերաբերելի միջազգային փաստաթյունների համակարգային ուսումնասիրության վրա:

**Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են քննչական և օպերատիվ հետախուզական մարմինների փոխագործակցության իրավական, կազմակերպական հիմքերը, մեթոդական չափորոշչները, գործող իրավական կառուցակարգերը, այդ թվում՝ այս համատեքստում օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական բնույթը ու նշանակությունը: Առաջին անգամ ատենախոսության մակարդակում քննարկվել և վերլուծվել են հանցագործությունների կանխարգելման առնչությամբ իրավապահ առաքելություն իրականացնող մարմինների աշխատանքի համակարգման և փոխագործողության առանձնահատկությունները նաև համապատասխան ոլորտային մեթոդիկայի մշակման դիտանկյունից: Արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական և գործնական առաջարկներ:**

**Աստենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպա-**

## **Նույթյան ներկայացվող հետևյալ դրույթներում.**

1. Աստենախոսությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում կարևորվել է այն, որ նախնական հանցավոր գործունեության փուլերի աստիճանական տեսական զարգացումը թույլ է տալիս հանցագործությունների կանխարգելմանը վերագրել դիտավորության ձևավորման և բացահայտման, նախապատրաստական գործողությունների իրականացման պահից մինչև հանցագործության փորձի ու կատարման փուլերը: Ընդ որում, հետազոտելով հանցանքի կանխմանն առնչվող առանձին հիմնահարցեր, նաև կարևորել է այն հանգամանքը, որ նոյն հանցանքը որոշ իմաստով համարվում է կանխված նաև այն դեպքում, եթե դրա կատարման օբյեկտիվ կողմը հանդիսացող արարքը սկսել է, սակայն, օպերատիվ-քննչական աշխատանքների և գործողությունների շնորհիվ չի հաջողվել ավարտին հասցնել:

Ուստի, բացահայտելով հանցագործությունների կանխարգելման աշխատանքների բովանդակային՝ քրեաբանական, քրեադատավարական, օպերատիվ հետախուզական կողմերը՝ ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ «հանցագործության կանխարգելումը» պետական և այլ մարմինների, ինչպես նաև քաղաքացիների կողմից իրականացվող միջոցառումների ամբողջություն է, որն ուղղված է համապատասխան քայլերի մշակման և իրականացման միջոցով նախապատրաստված (նախապատրաստվող) հանցագործությունների կատարման հավանականության վերացմանը:

2. Աստենախոսությամբ կատարված հետազոտության արդյունքում կարևորելով այն, որ հանցագործությունների կանխարգելման արդյունավետության գլխավոր նախապայմաններից է այդ աշխատանքների համակարգված կամ կոռորդիանցված կազմակերպումը, առանց որի հնարավոր չէ լուծել առաջադրված ընդհանուր խնդիրները՝ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի հավասարապես կարևորվում են ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական համակարգման կազմակերպումը, քանի որ այդ գործընթացին ներգրավված մասնագիտացված տարբեր մարմինների ու սուբյեկտների գործունեությունը, այդ թվում՝ համատեղ գործունեության պլանով ու մեթոդաբանության առկայությամբ, ուղղված է մեկ ընդհանուր խնդիրի լուծման նպատակի իրագործմանը, և, որպիսի պայմաններում աշխատանքային

համաշափությունը (սիմետրիա) պահպանումը դիտարկվում է հիշյալ նպատակին հասնելու անհրաժեշտ գրավականը:

3. Սահմանադրահրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքներով պայմանավորված՝ քրեադատավարական նոր իրավակարգավորումների համատեքստում հիմնավոր է համարվել համապատասխան իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, որով որոշակիացվելու են փոխգործողության քրեադատավարական և կազմակերպական տարրերի սահոն հարաբերակցությունը:

4. Քրեադատավարական նորմերի և քննչական պրակտիկայի համակարգային վերլուծության արդյունքներով հիմնավոր է համարվել այն գաղափարը, որ քննչական գործողություններին նախապատրաստելիս և կատարելիս «ՕՀԳ-ի արդյունքների օգտագործման հնարավորություն» եզրույթն անհրաժեշտ է ընկալել որպես՝

ա) քննչական ստորաբաժանումների և ՕՀԳ իրականացնող մարմինների միջև փոխգործողության կազմակերպում,

բ) քննչական գործողություններ կատարելու, դրանք նախապատրաստելու և կատարելու մասին որոշումներ կայացնելիս ՕՀԳ-ի արդյունքներն իրագործելիս տարբեր մարտավարական (տակտիկական) հնարքների անմիջական կիրառում:

5. Կարևորելով ժամանակակից քննչական գործունեության պրակտիկան ու գործառնական նշանակությունը, ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ նպատակահարմար է որոշումներ կայացնելիս, քննչական գործողություններ նախապատրաստելիս և իրականացնելիս դիտարկել օպերատիվ – հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման երկու մարտավարական (տակտիկական) ձևեր.

ա) գործող օրենսդրությանը համապատասխան ներկայացված օպերատիվ – ծառայողական փաստաթղթերի անմիջական ուսումնասիրություն, որոնք պարունակում են որոշակի ՕՀՄ-ների արդյունքներ, ինչպես նաև՝ տեղեկությունների այլ նյութական կրիչների ուսումնասիրություն.

բ) ՕՀԳ-ի արդյունքների՝ որպես կողմնորոշող տեղեկության օգտագործում որոշակի քննչական գործողությունների կատարման մարտավարությունը (տակտիկան) որոշելիս.

Միաժամանակ, գործող օրենսդրության վերլուծության շրջանակում, երբ ՕՀԳ-ի արդյունքների օգտագործումը հնարավոր է որոշում կայացնելիս և հարցաքննություն, զննության, խուզարկության, առգրավման, փորձաքննության, քննման տարրեր տեսակներ իրականացնելիս, ատենախոսությամբ հիմնավորվել է նաև այն գաղափարը, որ՝ ՕՀԳ-ի արդյունքների՝ որպես կողմնորոշող տեղեկության օգտագործում՝ 1) հնարավոր է հարցաքննություն, խուզարկություն, քննչական փորձարարություն, ճանաչման ներկայացում, տեղում ցուցմունքների ստուգում նախապատրաստելիս և իրականացնելիս առաջին հերթին հիգիենական կոնտակտ ձևավորելու և քննչական գործողության մասնակիցների բացասական դիրքորոշման հաղթահարման նպատակով, 2) նշված քննչական գործողությունների կատարման ժամանակ նրանց կողմից հնարավոր ագրեսիայի կանխատեսման նպատակով, 3) հանցագործության քննության ժամանակ օպերատիվ – տակտիկական կոմբինացիայի նպատակներին հասնելու համար:

6. Ատենախոսությամբ կատարված ուսումնասիրությամբ բացահայտվել է այն, որ ՕՀԳ-ի նյութերի վերլուծությունն ու դրանց գնահատումը քննչական իրադրության և դրա տարրերի տեղեկատվական տարրերից է, ինչը նշանակում է, որ իր հերթին, քննարկվող տեղեկատվական տարրն ընդհանուր առմամբ քննչական իրադրության կամ դրա առանձին տարրերի վրա տակտիկական ազդցության նպատակի ընտրության, ինչպես նաև՝ նպատակին հասնելու պայմանների և միջոցների որոշման և տակտիկական դիրքորոշման իրագործման արդյունքների կանխատեսման համար հիմք է հանդիսանում:

Վերօգրյալի և քննչական պրակտիկայի վերլուծության հիման վրա ատենախոսությամբ հիմնավորվել է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները կարող են դրվել այնպիսի քննչական գործողությունների կատարման մասին որոշում կայացնելու հիմքում, ինչպիսիք են՝ քննումը, հարցաքննությունը, խուզարկությունը, առգրավումը, տեղանքի, շինության, առարկաների և փաստաթղթերի զննությունը, փորձաքննության նշանակումը:

7. Հաշվի առնելով հանցագործության գործիքի սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու, ինչպես նաև վերջիններիս գործուն մասնակցությունը հանցավորության

կանխարգելման կարևորությունը, ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ նպատակահարմար է ստեղծել հանցագործությունից տուժածներին օգնելու հանրային, այդ թվում՝ պետական հիմնադրամներ (տարածքային և տեղական մակարդակներում՝ նրանց տրամադրելով համապատասխան նպատակային բյուջետային և օրենքով չարգելված աղյուրներից ֆինանսական միջոցները:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն առաջին հերթին այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է հանցագործությունների կանխարգելման ոլորտում քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության ինստիտուտին վերաբերող գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համային աշխատանք: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է օպերատիվ-հետախուզական գործունեության, հանցագործությունների կանխարգելման, քննչական և օպերատիվ- հետախուզական մարմինների միջև համագործակցության ինստիտուտին առնչվող խնդիրների ուսումնաժրությանը: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնաժրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել իրավակիրառականի կատարելագործմանը:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, որտեղ կատարվել է աշխատանքի քննարկումը և գրախոսությունը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից իրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են գեկուցների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների, ինչպես նաև << Ազգային անվտանգության ծառայության գիտառությունական կենտրոնի կողմից կազմա-

կերպվող վերապատրաստման ծրագրերի շրջանակներում:

**Ատենախոսության կառուցվածքը** պայմանավորված է հետազոտության նպատակով և գիտագրո՞նական խնդիրներով, ինչպես նաև շարադրման տրամաբանությամբ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը,** մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության իրավական, փորձառական և մեթոդաբանական հիմքերը: Նշվածից զատ, ներածության մեջ համակողմանիորեն հիմնավորված են նաև աշխատանքի գիտական նորույթը, գործնական և տեսական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ծևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Հանցագործությունների կանխարգելման իրավական բնույթը»** վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

**Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Հանցագործությունների կանխարգելման հասկացությունն ու բովանդակությունը»** վերտառությամբ, ըննարկման ինքնուրույն առակա է դատել հանցագործությունների կանխարգելման իրավական բնույթը, դրան առնչվող համապատասխան տեսական հատկանիշներն ու վավերապայմանները: Այնուհետև, հեղինակի կողմից առաջարկվել է հանցագործությունների կանխարգելման ժամանակագրական պահի առնչությամբ սեփական դիրքորոշումը՝ այն խարսխերով հանցագորության դեմ պայքարի արողի միտումների վրա:

**Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը՝ որպես հանցագործությունների կանխարգելման միջոց»**

Վերտառողիքամբ, քննարկվել է օպերատիվ-հետախուզական գործունեությունը՝ որպես հանցագործությունների կանխարգելման իրավական միջոց և կառուցակարգ: Առանձին անդրադարձ է կատարվել դրա դերին, տարբեր իրավական ակտերով իրավապահ մարմինների առաջադրված խնդիրներին և նպատակներին, և փորձ է արվել այն կապել հանցագործությունների կանխարգելման ինստիտուտի հետ:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «**Հանցագործությունների կանխարգելման իրավական հիմքերը**» քննարկման առարկա են դառնել հանցանքների նակնիման իրավական հիմքերը, դրանց հետագա կատարելագործման ուղղությունները: Առանձին անդրադարձ է կատարվել նաև հանցանքների կանխման իրավական հիմքերից բխող կազմակերպական փոխգործակցության հիմնախնդիրներին, որոնք ևս չափազանց կարևոր են ատենախոսության հետապնդությունը նպատակների կենսագործման տեսանկյունից:

Այժենախոսության երկրորդ գլուխը՝ «**Հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության տեսահրավական հիմքերը**» վերտառողիքամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «**ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության հասկացությունը և տեսական հիմքերը**» վերտառությամբ, քննարկվել են ՕԳՀ և վարույթն իրականացնող մարմինների միջև փոխգործակցության արդի իրավական խնդիրները: Առանձին անդրադարձ է արվել այն հանգամանքին, որ գործող կարգավորումներում առկա լուծումները էական կատարելագործման անհրաժեշտություն են ենթադրում այնքանով, որքանով միշտ չէ, որ առնվազն նորմատիվ մակարդակով բավարար չափի կարգավորված է փոխգործակցության շրջանակներում ՕՀԳ արդյունքների օգտագործման ընթացակարգը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «**ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության իրավական հիմքերը**» վերտառողիքամբ, քննարկվել են ՕՀԳ և քրեական վարույթն իրականացնող մարմինների միջև փոխգործակցության ապահովման իրավական հիմքերը: Այս

կապակցությամբ վերլուծության ինքնուրույն առարկա են դառել քննիչի և հետաքննության մարմնի լիազորությունները և այս կապակցությամբ արվել են դրանց հետագա կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկներ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության կազմակերպական հիմքերը» վերտառությամբ, անդրադարձ է կատարվել քննության պլանավորմանը՝ որպես հանցանքների կանխման մասով էական նշանակություն ունեցող գործիք: Ինքնուրույնաբար քննարկվել է նաև հետաքննության մարմնի կողմից նախաքննության փուլում գտնվող քրեական վարույթով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար հանձնարարություն տալու պարտադիր բնույթին, որի համատեքստում վկայակոչվել է նաև Վճռաբեկ դատարանի ծևափորած իրավակիրառ արակտիկան:

Այժմայնուության երրորդ գլուխը՝ «Հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության արդյունավետության կատարելագործման ուղղությունները» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության համակարգումը» վերտառությամբ, քննարկվել է տակտիկայի նշանակությունը հանցանքների կանխման և բացահայտման գործում: Փորձ է արվել առաջ քաշելու հստակ մեթոդական չափորոշիչներ և կառուցակարգեր, որոնք միտված են նոր որակի բերելու քրեական վարույթն իրականացնող մարմին-ՕՀԳ մարմին համագործակցության մակարդակը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության մարտավարությունը» վերտառությամբ, քննարկվել են ՕՀԳ արդյունքների օգտագործման որոշ առանձնահատկություններ քննության մարտավարական պլանավորման դիրքերից: Զուգահեռ քննարկվել են նաև այդ կապակցությամբ վերաբերելի օրենսդրական կարգավորումները:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «ՕՀԳ և քրեական վարույթ իրականացնող մարմինների փոխգործողության զարգացման միտումները»

վերտառությամբ, քննարկվել են ՕՀԳ արդյունքների վերլուծության և գնահատման հետ կապված հարցերը, որոնք ձեռք են բերում առանձնահատուկ կարևորություն՝ պայմանավորված դրանց ապացուցողական նշանակությամբ: Առանձին անդրադարձ է արվել նաև օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների վերլուծման և գնահատման հարցին, որոնք ենթադրաբար պեսոք է օգտագործվեն քննչական գործողությունների կատարման մասին որոշում կայացնելու համար: Այս պարագրաֆում քննարկվել են նաև «քննչական գործողություն» իրավական բնորոշման հետ կապված մի շարք հարցեր:

**Եզրակացությունում** ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների առաջարկները, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին.

1. Քրեական վարույթ և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների փոխգործողության խնդիրներն առավել ընդհանրական են, որը պայմանավորված է այդ մարմինների հանցավորության դեմ պայքարի ոլորտում համատեղ աշխատանքի համաձայնեցված բնույթով՝ չբացառելով նաև այդ ընթացքում ոլորտային ՕՀԳ որոշ խնդիրների լուծումը:

2. Օպերատիվ աշխատակիցների համապատասխան մասնագիտական պատրաստվածությունը թույլ է տալիս ընտրել մարտավարական ճիշտ վարդագիծ՝ գործ ունենալով նրանց հետ, ովքեր ստուգվել ու մշակվում են հանցագործության նախապատրաստման կամ այն կատարելու կասկածանքով:

Այսպիսով, մարտավարությունը, այսինքն նպատակներին հասնելու ամենաարդյունավետ, միևնույն ժամանակ նվազագույն ծախսատար ջանքերի և միջոցների հատուկ տեխնիկայի ու մեթոդների համակարգը հանցագործությունների կանխարգելման և խափանելուն ուղղված ՕՀԳ-ի առանցքն է:

3. Պետական գործունեության ցանկացած տեսակ, այդ թվում՝ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված պետական մարմինների գործունեությունը միտված է նպաստելու սոցիալական այնպիսի արժեքների ձևավորմանն և պահպանությանը, որոնք ուղղված են պետության բնականոն զարգացմանն ու անվտանգության ապահովմանը, մարդկանց իրավունքների ու

ազատությունների, հասարակության նյութական և հոգևոր արժեքների պաշտպանությանը: Այս առումով ՕՀԳ-ն, որպես պետության իրավապահպան գործունեության ոլորոյն տեսակ, ունի կարևոր դերակատարություն, ինչն արտահայտվում է գործունեության այդ տեսակի համար օրենսդրորեն սահմանված նպատակներում, ինչպես նաև այն խնդիրներում, որոնց լուծմամբ ինարավոր է հասնել այդ նպատակներին:

4. Օրենսդիրը դասական իմաստով չի առանձնացրել փոխգործողության դատավարական և կազմակերպական հիմքերը, այլ քրեադատավարական գործառույթներ իրականացնող իրավասու պաշտոնատար անձնանց, *inter alia*, օժտել է նաև կազմակերպական աշխատանքներ կատարելու իրավասության, որի շրջանակներում էլ կարծում ենք կարելի է դիտարկել քրեական վարույթի շրջանակներում քրեական վարույթ և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համակարգված փոխգործողության ապահովումը:

5. Հանցագործությունների կանխարգելման համընդիանուր բնույթով պայմանավորված հավասարապես կարևորվում է ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական համակարգման կազմակերպումը, քանզի այդ գործընթացին ներգրավված մասնագիտացված տարրեր մարմիններն ու սուբյեկտները գործում են մեկ ընդհանուր խնդիրի լուծման նպատակով և համատեղ պլանով ու մեթոդաբանությամբ, որպիսի պայմաններում աշխատանքային սիմետրիայի պահպանումը նպատակին հասնելու լրջագույն գրավական է:

6. Հանցագործությունների կանխարգելմանն ու խափանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումները սերտորեն կապված են միմյանց և հաճախ փոխկապակցված, թեև ունեն որոշակի տարրերություններ: Նմանօրինակ միջոցառումներն իրականացվում են սոցիալապես վտանգավոր արարքի կամ դրա արդյունքների առաջացման սպառնալիքի ներքո: Ուստի ակնհայտ է հանցագործ մտադրության իրականացման սկիզբը կամ ավարտը կանխելուն ուղղված անհապաղ դինամիկ գործողությունների անհրաժեշտությունը:

## **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական իրապարակումներում.**

1. Սիմոնյան Ա., Ենգիբարյան Վ., Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության որոշ հիմնախնդիրներ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունների համատեքստում // Դատական իշխանություն, № 7-8/265-266, 2021, 12-24 էջեր,

2. Սիմոնյան Ա., Որոշ նկատառումներ քրեադատավարական փոխգործողության հեռանկարային իրավակարգավորումների վերաբերյալ // Բանքեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021, 101-105 էջեր,

3. Սիմոնյան Ա., Հանցագործությունների կանխարգելման խնդիրը քրեական վարույթ և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրավանացնող մարմինների փոխգործողության համատեքստում // Դատական իշխանություն, № 11-12/269-270, 2021, 54-59 էջեր,

4. Սիմոնյան Ա., Փոխգործողության համակարգումը հանցագործությունների կանխարգելման կազմակերպման համատեքստում // Բանքեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (7), 2022, 110-117 էջեր,

5. Սիմոնյան Ա., Հանցագործությունների կանխարգելմանն ուղղված իրավասու մարմինների գործունեության մարտավարական ընդհանուր դրույթներն ու պայմանները // Բանքեր Արդարադատության ակադեմիայի, № 2 (8), 2022, 134-141 էջեր,

6. Սիմոնյան Ա., Փոխգործողության քրեադատավարական և կազմակերպական բաղադրիչների փոխհարաբերակցության իրատապ հիմնախնդիրները // Դատական իշխանություն, № 10-12/280-2282, 2022, 78-85 էջեր,

7. Սիմոնյան Ա., The content of the definition of the results of operative-search activity and the perspective of their using, «Կաճառ» գիտական հանդես, 11-19 էջեր,

8. Սիմոնյան Ա., Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմունքներ // Իրավակիրառական ուղեցույց, << ԱԱԾ գիտառական կենտրոն, 2023, 292 էջ,

9. Սիմոնյան Ա., Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հնարավորություններն ու ուղղությունները // Եվրասիա միջազգային համալսարանի «Բանքեր» գիտական հանդես, 2023, N 1, 11-19 էջեր:

# **СИМОНЯН АНДРАНИК АРАМОВИЧ**

## **Проблемы взаимодействия органов, осуществляющих оперативно-разыскную деятельность и уголовное производство в контексте предупреждения и расследования преступлений**

### **Резюме**

**Актуальность темы.** В диссертации рассматриваются правовая природа профилактики правонарушений, особенности и существующие правовые проблемы в этой связи и направления их совершенствования. Раскрыты основы взаимодействия следственных и оперативно-разыскных органов, выделены существующие правовые пробелы в отношении использования доказательств и способов их преодоления. В частности, до сих пор кажется проблематичной ситуация, когда не разработана надлежащая законодательная концепция института профилактики правонарушений.

При проведении исследований в отношении института профилактики правонарушений нельзя не упомянуть о значении оперативно-разыскной деятельности. Ее значение наиболее ярко подчеркивается тем, что во всех законах, касающихся органов, выполняющих оперативно-разыскные задачи, в качестве задачи-цели закреплено предупреждение, выявление и пресечение преступлений. В соответствии с правовыми нормами, установленными принятым в 2021 г. Уголовно-процессуальным кодексом РА, миссия оперативно-разыскных органов должна стать предметом обсуждения с позиции качественно новой реальности, когда дознание уже не самостоятельный этап, а вспомогательная деятельность для осуществления предварительного следствия.

Характер и содержание рассмотренного выше сотрудничества качественно меняются также с учетом того, что в настоящее время в рамках возбуждаемого уголовного производства негласные следственные действия могут производиться исключительно на основании поручения следователя, что прямо предполагает сделать предметом обсуждения отношения, связанные с взаимодействием оперативно-разыскных подразделений и органов следствия.

Ключевое значение имеет также правильная организация оперативно-разыскной деятельности следственной работы с точки зрения методологии. В этом смысле существующая правовая база требует кардинального совершенствования. Очевидно, что обеспечить надлежащее взаимодействие следственных и оперативно-разыскных подразделений невозможно без организационно-методических основ. С учетом совокупности проблем, составляющих предмет исследования, данный вопрос также затрагивался в

соответствующих разделах, исходя из тенденций обеспечения более всестороннего и комплексного характера выполняемой работы.

**Научная новизна исследования.** Диссертация представляет собой целостное научно-исследовательское исследование в отечественной юриспруденции, в котором предпринята попытка всесторонне обсудить и проанализировать теоретические и практические проблемы, связанные с институтом взаимодействия следственных и оперативно-розыскных органов. При этом, отмеченные исследования были проведены на основе сравнительно-правового анализа действующего Уголовно-процессуального кодекса РА, правовых актов, относящихся к соответствующим сферам, уголовно-процессуального законодательства и судебной практики отдельных иностранных государств, мнений, имеющихся в различных источниках, правовых позиций Конституционного суда РА, Европейского суда по правам человека, судебных актов Кассационного суда РА и судебной практики, на систематическом изучении соответствующих международных документов.

Были исследованы в не полной мере изученные либо вовсе не изученные в отечественной процессуальной литературе такие вопросы, как правовые, организационные основы взаимодействия следственных и оперативно-розыскных органов, методические критерии, действующие правовые механизмы, в том числе правовой характер и значение оперативно-розыскной деятельности в данном контексте. Впервые на уровне диссертации были обсуждены и проанализированы особенности координации работы и взаимодействия органов, осуществляющих правоохранительную миссию по предупреждению преступлений, также с точки зрения разработки соответствующей отраслевой методики. В результате были сделаны теоретические выводы и представлены законодательные и практические предложения.

**Теоретическая и практическая значимость исследования.** Значение проведенных в диссертационной работе исследований состоит, прежде всего, в том, что впервые в отечественном процессуальном праве разработана комплексная работа, посвященная выявлению практических проблем, относящихся к институту сотрудничества следственных и оперативно-розыскных органов в области предупреждения преступлений и рассмотрению путей их разрешения. Результаты анализов, выполненных в диссертации, могут быть использованы в дальнейших научных исследованиях и на курсах, предмет которых касается изучения вопросов, связанных с оперативно-розыскной деятельностью, предупреждением преступлений, институтом сотрудничества следственных и оперативно - розыскных органов. Исследования, проведенные в связи с данной проблемой, представленные предложения и их обоснования могут быть использованы в правотворческой деятельности, а также способствовать совершенствованию правоприменительной практики.

**Problems of interaction of bodies carrying out operational  
investigative activities and criminal proceedings in the  
context of crime prevention and investigation**

**SUMMARY**

The dissertation refers to the legal nature of crime prevention, features and existing legal problems in this sphere and directions for their improvement. In this regard, a separate reference was made to the fundamentals of cooperation between investigative and operative-intelligence bodies. The existing legal loopholes regarding the use of evidence and ways to overcome them were especially emphasized. In particular, the existence of the situation that a proper legislative conception regarding the institution of crime prevention has not been developed, seems problematic until now. From the point of view of the legislative fixation of the institutes, the chronological moment of the application of the crime prevention institute is not specified yet, in particular, when the action of the objective side of the crime is not completed due to the work of operative-investigative and investigative bodies. A question arises in this context: should the crime be considered prevented in this situation or is it limited to an earlier chronological moment?

When conducting research regarding the crime prevention institute, it is important to stress the significance of operative-investigative activities in this context. Its importance is highlighted in the most vivid way by the fact that in all the laws related to the bodies carrying out operative-intelligence missions, the prevention, detection and disruption of crimes is fixed as a problem-goal. It is natural that, taking into account the legal regulations defined by the Criminal Code of the Republic of Armenia adopted in 2021, the mission of the bodies carrying out operative-investigative activities should become the subject of discussion from the perspective of a qualitatively new reality, when an independent phase of the investigation no longer exists, and it is considered as a supporting activity for the preliminary investigation.

The nature and the content of the above-discussed cooperation are also qualitatively changed by taking into account the fact that secret investigative actions can be carried out within the framework of currently initiated criminal proceedings solely on the basis of the investigator's assignment, which directly implies making the relations associated with the interaction of operative-investigative units and investigative bodies subject to discussion in that context as well.

In this regard, the proper organization of operative-investigative activity and investigative work is of key importance from the point of view of methodology as well.

In this sense, the existing legal frameworks require radical improvement. It is obvious that it is impossible to ensure the proper interaction of investigative and operative-intelligence units without the necessary organizational-methodical support related to it. In this context, taking into account the combination of problems that are the subject of the research, this issue has also been addressed in the relevant sections, to ensure a most comprehensive and all-inclusive nature of the current work performed.

The dissertation is a comprehensive and holistic research study of domestic jurisprudence, in which an attempt is made to comprehensively and comprehensively discuss and analyze theoretical and practical problems related to the institute of interaction between investigative and operational-search authorities: At the same time, the noted studies were conducted on the basis of a comparative legal analysis of the current Criminal Procedure Code of the Republic of Armenia, legal acts related to the relevant areas, criminal procedure legislation and judicial practice of certain foreign states, opinions available in various sources, legal positions of the Constitutional Court of the Republic of Armenia, the European Court of Human Rights, judicial acts of the Court of Cassation of the Republic of Armenia and judicial practice, based on a systematic study of relevant international documents.

Issues such as the legal and organizational bases of interaction between investigative and operational-investigative bodies, methodological criteria, existing legal mechanisms, including the legal nature and significance of operational-investigative activities in this context, which were not fully studied or not studied at all in the domestic procedural literature, were investigated. For the first time at the dissertation level, the peculiarities of coordination of work and interaction of bodies carrying out a law enforcement mission to prevent crimes were discussed and analyzed, also from the point of view of developing an appropriate industry methodology. As a result, theoretical conclusions were drawn and legislative and practical proposals were presented.

**The Theoretical and practical significance of the dissertation.** The significance of the research carried out in the dissertation work consists, first of all, in the fact that for the first time in domestic procedural law, a comprehensive work has been developed dedicated to identifying practical problems related to the institute of cooperation between investigative and operational-search authorities in the field of crime prevention and considering ways to resolve them. The results of the analyses performed in the dissertation can be used in further scientific research and courses, the subject of which concerns the study of issues related to operational investigative activities, crime prevention, the institute of cooperation of investigative and operational investigative bodies. The studies conducted in connection with this problem, the proposals presented and their justifications can be used in law-making activities, as well as contribute to the improvement of law enforcement practice.